թեան արժանի է մարդու գլեատը, որ քղանցքները զարդարուն չուխայ է, իսկ առակից երկար բաճկոն, նեղ անդրավարտիկ եւ կօշիկներ հագած: Խաղողի կախ ողկոյզները ոլորապտոյտ որթի վերայ, նմանութիւն Գառնիի Տրդատայ Թախտի հարթաքանդակ նման զարդի հետ, ինչպէս իրաւամբ նկատել է Ստրշիգովսկին:*

գլխից, մի սուր դէպի պարանոցը մեկնել: Իսահակը ծալապատիկ (կապուած է՞) դրուած է անկիւնի սեղանի վերայ, որ բունով հաստատուած է պատուանդանի մէջ: Աբրահամի յետեւից կախուած է խոյը, վերեւի անկիւնից. Տիրոջ աջը օրհնում է, երկինք ձեւացնող կամարի տակից: Դորանից բարձր մի սիրամարգ կտցահարում է մի ինչ



Պատկ. 55

Երկրորդ բեկորը նոյնպէս գերեզմանական կոթողի մաս է, իսկ քանդակը Աբրահամի զոհաբերութիւնը, որ մենք պիտի տեսնենք Թալինի եւ Աղիեամանի յուշարձանների վերայ եւս, միայն այնտեղ քիչ տարբեր դասաւորութեամբ եւ աւելի պարզ բովանդակութեամբ: Պատկերի մէջին ֆիգուրը, որ Աբրահամն է, մի ձեռքով բռնել է Իսահակի

որ բան, որ փչացած է, հաւանօրէն խաղողի ողկոյզ: Այս բոլորն առնուած է քառանկիւնի շրջանակի մէջ, Օձունի եւ Բրդաձորի նման: Աջը որպէս Աստուծոյ ներկայութեան նշան տեսնում ենք նաեւ Ռաւեննայի Ս. Վիտալիոսի մոզայիկների մէջ, որպիսին Աբէլի եւ Մելքիսեդի զոհաբերութիւնն է:

Երրորդը պահել է միայն մի խաչքանդակ երկաստիճան պատուանդանի վերայ հաստատուած, որ պէտք է դիտել ի հակա-

*Die Baukunst. 406: